



Կարգապահական գործ թիվ ԿԳ-20008

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի օգոստոսի 11-ի թիվ 95 նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ-74-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյան, Խորհրդի անդամներ՝ Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 2004) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Արմեն Խաչատրյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Պալատ, հայտնել է հետևյալը.

2018թ-ի ամռանը Դիմողը պատրաստվում էր դատական հայցեր ներկայացնել զանգվածային լրատվամիջոցների դեմ՝ հրապարակված զրպարտությունների և վիրավորանքի հերքման պահանջով: Դիմել է փաստաբան Տիգրան Սարգսյանին իրավախորհրդատվություն ստանալու նպատակով: Պատասխանողը Դիմողին հայտնել է, որ վերջինս լրատվական միջոցին կարող է դատի տալ 6 ամսվա ընթացքում, սակայն չի բացատրել օրենքի նրբությունները, այն է՝ որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ զրպարտության և վիրավորանքի գործերով անձը կարող է դատարան դիմել վիրավորանքի կամ զրպարտության մասին իրեն հայտնի դառնալու պահից 1 ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան վիրավորանքի կամ զրպարտության պահից 6 ամսվա ընթացքում:

Փաստաբանի կողմից Դիմողի համար կազմված բոլոր հայցադիմումները դատարանը վերադարձրել է՝ դրանցում արձանագրելով տարբեր թերություններ: Պատասխանողի ցուցումով Դիմողն ուղղել է հայցադիմումներում տեղ գտած թերությունները և չիմանալով հայցային վաղեմության օրենսդրական ժամկետի

մասին՝ մեկ շաբաթ անց կրկին հայցադիմումներն ուղարկել է դատարան, որոնցից միայն մեկն է դատարանի կողմից ընդունվել վարույթ, իսկ մյուսները կրկին վերադարձվել են Դիմողին՝ նոր թերությունների արձանագրմամբ:

Դիմողի՝ վարույթ ընդունված հայցադիմումի շրջանակներում 10.04.2019թ. պատասխանողի ներկայացուցչի կողմից առարկություն էր ներկայացվել՝ դատարանին, որով վերջինս միջնորդել էր հայցային վաղեմություն կիրառելու հիմքով Դիմողի հայցը մերժել:

Գործը հետագայում կարճվել է Դիմողի ներկայացուցչի Մուշեղ Շուշանյանի՝ հայցից հրաժարվելու վերաբերյալ 08.07.2019թ. ներկայացրած դիմումի հիման վրա՝ այն նկատարմամբ, որ Դիմողին նախկինում ցուցաբերվել է ոչ պատշաճ իրավաբանական օգնություն, ինչի հետևանքով հայցադիմումը դատարան է ներկայացվել՝ հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ:

Դատարանի 10.10.2019թ. կայացված վճռով պատասխանող կողմի միջնորդությունը բավարարվել է մասնակի, և որոշվել է Դիմողից հօգուտ պատասխանողի բռնագանձել 100,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ըստ Դիմողի՝ Պատասխանողի տրամադրած ոչ պատշաճ, ոչ բարեխիղճ իրավաբանական օգնության հետևանքով ոչ միայն կարճվել է իր դատական գործի վարույթը, այլև բարոյական վնասի հետ մեկտեղ իրեն պատճառվել է նյութական վնաս:

Պատասխանողը Դիմողի հետ խոսելիս սկզբում ընդունել է, որ գրպարտությունների հիմքով Դիմողին նշել է վեցամսյա ժամկետ, սակայն երբ Դիմողը Պատասխանողին ցույց է տվել վերջինիս ակնհայտ սխալը, վերջինս ստել է, թե իբր վեցամսյա ժամկետ նշելով՝ նկատի է ունեցել աշխատանքից հեռացվելու դեպքում հայցային վաղեմության ժամկետը, որպիսի դեպք տեղի չէր ունեցել, և հնարավոր չէր, որ Դիմողը Պատասխանողին հետ նման քննարկում ունենար:

Դիմողը խնդրել է Պատասխանողի նկատմամբ իրականացնել կարգապահական վարույթ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 12.05.2020թ. թիվ 79-Ա/ԿԳ-20008 որոշմամբ փաստաբան Տիգրան Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագրքի**) 2.7.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

18.05.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1 Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում բացատրություն չի տվել: Խորհրդի նիստին Դիմողը հայտնել է, որ Պատասխանողն իրեն և իր ծանոթ Արմեն Առաքելյանին պետք է իրավաբանական օգնություն տրամադրեր: Պատասխանողի հետ պայմանագիրն իր կողմից չի կնքվել, ինքը պայմանագիրը չի տեսել և չի ընթերցել, պայմանավորվածություններն իր ու Պատասխանողի միջև եղել են բանավոր:

Դիմողը վերահաստատել է նախկինում Դիմումով և Նախապատրաստողի եզրակացության դեմ ներկայացված առարկություններով հայտնած դիրքորոշումը:

3.2 Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Պատասխանողը կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում ներկայացրել է բացատրություն, որում հայտնել է հետևյալը:

Պատասխանողը չի պարտավորվել Դիմողին տրամադրել իրավական օգնություն և Դիմողի համար չի պատրաստել հայցադիմում:

Ըստ Պատասխանողի՝ վերջինս Դիմողի հետ հանդիպել է 1 անգամ 2018թ. ամռանն իր գործընկերների գրասենյակում: Դիմողը Պատասխանողին հարցեր է ուղղել զրպարտության և վիրավորանքի հիմքով դատարան դիմելու մասին, ինչին ի պատասխան՝ Փաստաբանը Դիմողին ներկայացրել է նշված ոլորտի իրավակարգավորումները, ցույց է տվել www.arlis.am կայքը, որտեղից Դիմողը կարող է գտնել համապատասխան օրենքները և բացատրել է այդ կայքից օգտվելու կարգը: Դիմողը խնդրել է Պատասխանողին իրեն տրամադրել հայցադիմումի տիպային օրինակ, և Պատասխանողը Դիմողին տվել է նման տիպային օրինակներ: Դրանից հետո, ըստ Փաստաբանի, Դիմողն ինքնուրույն է կազմել հայցադիմումները, ուղարկել դատարան, իր հետ չի խորհրդակցել, և Փաստաբանն էլ պարտավոր չէր հետաքրքրվել Դիմողից վերջինիս գործի ընթացքի մասին:

Ըստ Պատասխանողի՝ Դիմողի դիմումից հետևում է, որ վերջինս ունեցել է այլ փաստաբան:

Պատասխանողը հայտնել է նաև, որ անցել են Դիմողի դիմումով իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

Պատասխանողը Խորհրդի նիստին չի ներկայացրել, թեև պատշաճ ծանուցված է եղել Խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին:

3.3 Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4 Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

07.07.2020թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմայանը Պալատ է ներկայացրել եզրակացություն:

10.07.2020թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

16.07.2020թ. Պալատում մուտքագրվել է Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Դիմողի առարկությունը:

Դիմողը հայտնել է, որ Նախապատրաստողի եզրակացությունում մեջբերված՝ Պատասխանողի բացատրությունները մեծ մասամբ չեն համապատասխանում իրականությանը:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2020 թվականի օգոստոսի 11-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5 Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ՝ նաև Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Դիմողի կողմից Պատասխանողին վերագրվող ենթադրյալ վարքագիծը տեղի է ունեցել 2018թ. ամռանը, որի մասին Դիմողը տեղեկացել է 10.04.2019թ.-08.07.2019թ. ընկած ժամանակահատվածում: *Նշյալ փաստերը հաստատվում են Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ, Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Դիմողի ներկայացրած առարկությամբ, «Դատալեքս» տեղեկատվական համակարգից արված քաղվածքներով:*

- Դիմումը Պալատ մուտքագրվել է 13.04.2020թ-ին: *Սույն փաստը հաստատվում է Դիմումով:*

6 Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004 ստացված՝ 15.10.2011թ.) նկատմամբ 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը):

Խորհրդի 06.03.2018թ. թիվ ԿԳ/32-Ա որոշմամբ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:

7 Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պարճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության **հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո:** Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Դիմումի շրջանակներում Պատասխանողի կարգապահական պատասխանատվության հիմք կարող էր լինել Դիմողին առերևույթ ոչ բարեխիղճ իրավաբանական օգնության տրամադրումը, որպիսի վարքագիծը հանդիսանում է Օրենքի և Կանոնագրքի խախտում:

Այդուհանդերձ, Դիմողը Պատասխանողին վերագրում է ենթադրյալ խախտում, որի մասին տեղյակ է եղել դեռևս 10.04.2019թ.- 08.07.2019թ. ընկած ժամանակահատվածում, սակայն Դիմումը Պալատ ներկայացվել է միայն 13.04.2020թ-ին:

Ավելին, Դիմողի կողմից Պատասխանողին վերագրվող ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագիծը տեղի է ունեցել 2018թ. ամռանը, որից շուրջ մեկուկես տարի հետո է միայն Դիմողը դիմել Պալատ:

Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասը հստակ սահմանում է, որ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության **հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո** : Այդ ժամկետն անցնելուց հետո փաստաբանը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության, և, համապատասխանաբար, հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հետևաբար, Դիմողի կողմից Փաստաբանին վերագրվող վարքագիծն անգամ հաստատվելու դեպքում, այն չէր կարող հիմք հանդիսանալ Պատասխանողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 7.2.5 ենթակետի 2-րդ պարբերության պահանջներով՝

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Տիգրան Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 2004) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարապետ Աղաջանյան

11 օգոստոսի 2020թ.
թիվ ԿԳ/74-Ա
ք. Երևան